

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ  
ՍԱՍԿԱԿԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

### **ԳԵՎՈՐԳՅԱՆ ՆԱՏԱԼՅԱ ԷՂՈՒԱՐՈՒ**

**ԴԵՌԱՀԱՆՆԵՐԻ ՇԵՂՎՈԴ ՎԱՐՔԻ ՍՈՑԻԱԼ - ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ  
ՊԱՏՃԱՌՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՊԱՀԱՐՄԱՆ ՈՒԽԻՆԵՐԸ**

ԺԹ.00.05 «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն»  
մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական  
աստիճանի հայցման ատենախոսության

### **ՍԵՂՄԱԳԻՐ**

ԵՐԵՎԱՆ 2014

Աստենախոսության թեման հաստատվել է Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

**Գիտական ղեկավար՝**

Իովերանական գիտությունների  
դոկտոր  
Սամվել Սուրենի Խուրոյան

**Պաշտոնական ընդդիմախոսներ՝**

Իովերանական գիտությունների  
դոկտոր  
Վլադիմիր Սևանի Կարապետյան

Իովերանական գիտությունների  
թեկնածու  
Սոնա Արտակի Մակիյան

**Առաջատար կազմակերպություն՝**

Գյումրու Մ. Նալբանդյանի անվան  
պետական մանկավարժական  
ինստիտուտ

Աստենախոսության պաշտպանությունը կայանալու է 2014 թվականի մարտի 4-ին, ժամը 12<sup>րդ</sup>-ին Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և Իովերանության 064 մասնագիտական խորհրդի նիստում:

Հասցեն՝ 0010, ք. Երևան, Տիգրան Մեծի 17:

Աստենախոսությանը կարելի է ծանոթանալ Խաչատրուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2014 թ. փետրվարի 4-ին:

Փիլիսոփայության և Իովերանության  
064 մասնագիտական խորհրդի  
գիտ. քարտուղար, Իովերանական  
գիտ. թեկնածու, դոցենտ

Կ. Ե. Վարդանյան

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

**Թեմայի արդիականությունը:**Հայտնի է, որ իրավախախումների և հանցավորության աճն ավելի շատ է պատերազմական իրավիճակում ընդգրկված, սոցիալական և բնական աղետների հետևանքները կրած երկրներում:Պատերազմների, բնածին, տեխնածին, այլարձույթ աղետների (կատակլիզմներ) պատճառով ուժեղանում են սոցիալական ցնցումները, ընկույն է ազգաբնակչության կենսամակարդակը, խարիսխում են ընտանիքների սոցիալ-տնտեսական և բարոյական հիմքերը, աճում է բարձիթողի, ծնողազուրկ, ծնողական խնամքից գրկված երեխաների թվաքանակը, ավելանում են մանկատները և այդ երեխաներով գրաղվող կազմակերպությունները, նպաստավոր պայմաններ են ստեղծվում օտարածին գաղափարների ներթափանցման համար: Հետևաբար զանգվածային բնույթ են կրում մանկական իրավախախումներն ու հանցավորությունները, քանի որ արտաքին անբարենպաստ ներգործություններին (դժվարություններին, այլափոխումներին ու փոփոխություններին, սադրանքներին և այլն) ավելի թույլ դիմադրություն են ցուցաբերում երեխաները:

Ինչպես մասնագիտական գրականության, այնպես էլ մեր երկրի համար անցումային այս ժամանակաշրջանում երեխաների զանցանքներիու իրավախախումների դիտարկվող երևոյթների օբյեկտիվ պատճառների և պայմանների (երեխաների նկատմամբ պետական – հասարակական սակավ հոգածություն կամ դրա բացակայություն, ընտանիքի ցածր կենսամակարդակ, անբարենպաստ ընտանիք, անարդյունավետ կրթադաստիարակչական գործունեություն, հասարակության մեջ տեղ գտած նեզատիկ երևոյթներ՝ հանցավորություն, անապատժելիություն, ամենաքրողություն և այլն) համակարգված վերլուծությունները ցույց են տալիս, որ գործառնական իմաստով դեռևս արդիական և առանձնահատուկ են այն գործուները, որոնք իրենց արտահայտությունն են գտնում «Երեխա - ծնող», «Երեխա - ընտանիք» մանկավարժութեն սխալ կամ անառողջ հարաբերություններում:

Դեռահասության տարիքում առավելապես նկատվում են շեղվող վարքի այն դրսևորումները, որոնք բացատրվում են դեռահասի մտավոր ցածր մակարդակով, անծի ձևավորման թերություններով, ընտանիքի կամ մերձավոր շրջապատի բացասական ներգործությամբ, դեռահասի և տվյալ խնդիր ցածր մակարդակի արժեքային համակարգով: Հաճախ պատճառների աստիճանակարգում հաշվի չեն առնվում տարիքային գործոնի ուղղակի ազդեցությունը և դեռահասության զգնաժամի առանձնահատկությունները, որոնց պատճառով դաստիարակվածության և զարգացվածության նմանատիպ մակարդակ ունեցող երեխաների համար շեղվող վարքը հանդես է գալիս որպես ինքնուրույնության կամ ինքնահաստատման, բողոքի, դիմադրության, մեծահասակների կողմից իրական կամ կարծեցյալ

անարդարության, վատ կամ սխալ վերաբերմունքի արտահայտման համարի միջոց:

**Հետազոտական թեմայի ընտրությունը** պայմանավորված է նաև շեղվող վարքի կոնկրետ պայմանների և հանգամանքների պարզաբանման անհրաժեշտությամբ: Դեռահասների շեղվող վարքի պատճառների ուսումնափրությունը հնարավորություն է տալիս բացահայտել և դասակարգել այն հիմնական պատճառները, որոնք հոգեբանական նախապայմաններ են դաշնում սխալ, բարոյազանց և շեղվող արարքների համար, միաժամանակ պարզելով օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների օրինաչափ կապերը:

**Հետազոտական թեմայի հիմնավորվածությունը** պայմանավորված է նաև դեռահասների անձնային և վարքային անբարենպաստ փոփոխությունների, ավելի կոնկրետ դրանց դիմանմիկայի հոգեբանական առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ:

Սույն հետազոտությունը հնարավորություն է տալիս, մի կողմից, տարրերակել և բնութագրել բացասական ազդեցությունները, կոնֆլիկտածին իրավիճակները, և կանխատեսել դրանց հնարավոր բացասական ներգործությունն աձող մարդու հոգեկանի և վարքի վրա, իսկ մյուս կողմից ուրվագծել ու մշակել վաղ պրոֆիլակտիկայի հոգեբանական միջոցառումներ անձի հետագա բարոյալքնան- քրեականացման գործնքացը կատեցնելու համար, որով էլ պայմանավորված է ատենախոսության արդիականության հիմնավորումը հատկապես գործնական տեսանկյունով:

**Հետազոտությունը** հրատապ է մեկ այլ պատճառով ևս, որ վերաբերում է շեղվող վարքի պատճառների աստիճանակարգին, նկատի ունենալով, որ առ այսոր գրեթե հետազոտված չէ հոր՝ որպես ընտանիքում հիմնական դաստիարակիչ ծնողի գործառույթի դրսնորումը դեռահասի դաստիարակության գործում:

**Հետազոտության օբյեկտը՝ դեռահասների դելինկվենտ վարքի պատճառականությունն է:**

**Հետազոտության առարկան՝ դեռահասների սեռային ինքնահաստատման և այդ գործնքացում հոր կերպարի առանձնահատկությունների դերն է շեղվող վարքի պատճառների համակարգում:**

**Ատենախոսության հիմնական նպատակն է** հետազոտել դեռահասների շեղվող վարքի հոգեբանական պատճառականության համակարգը, մասնավորապես բացահայտել հոր դերը դեռահասի շեղվող վարքի դրսնորման գործում:

**Հետազոտության գիտական վարկածի համաձայն.**

Դեռահասների դելինկվենտ վարքի ծևավորումը պոլիդետերմինիստական իրողություն է: Համարի պատճառների մեջ հատկապես կարևոր դեր են խաղում հետևյալ հանգամանքները.

- 1) Ծնտանիքում հոր դերի և հոր կերպարի աղավաղումը դեռահասի լյանքում,
- 2) Մեռային ինքնագիտակցության արբնացման հետևանքով տեղի է ունենում իդեալների որոնման և հանցագործ աշխարհի՝ որպես առնականության իդեալի (իհմնականում տղաների մեջ, ովքեր հանցագործ աշխարհի բարերը դիտում են որպես առնականության իդեալ) նմանակում դեռահասության տարիքում:
- 3) Դելինկվենտության ծևավորման հիճքը բացասական անձնային բնութագրերի որոշակի համարին է, որը հիմնականում պայմանավորված է անբարենպաստ ծնտանեկան հարաբերություններով, բարձրիքողի դաստիարակությամբ, բնավորության բացասական գծերով, հակահասարակական դիրքորոշումներով, դպրոցի հանդեպ բացասական վերաբերմունքով:

**ՀԵՏԱԳՈՒԹՈՒԹՅԱՆ ՆՊԱՏՈՎԱԿԻՑ և ՎԱՐԼԿԱԺԻՑ ԵԼՆԵԼՈՎ ԱՌՋԱՋՐՎԵԼ ԵՆ ՀԵՏԱԿԱՐԱ ԽՆԴԻՐՈՆԵՐԸ.**

1. Վերլուծել շեղվող վարքի պատճառականությանը վերաբերող մասնագիտական գրականությունը:
2. Տարբերակել շեղվող վարքի տարատեսակները, հետազոտության տեսական հիմքերի վերլուծությամբ հստակեցնել «դելինկվենտ» հակացության բովանդակությունը և համապատասխան վարքի ուսումնասիրության շրջանակը:
3. Հետազոտել հոր դերը դեռահասների շեղվող վարքի պատճառականության շրջայում:
4. Ինչպես այլ հենինակների, այնպէս էլ մեր հետազոտությունների վերլուծությամբ և ամփոփմամբ մշակել դեռահասների շեղվող վարքի պատճառականության էնափրիկ հետազոտությունների կազմակերպման տեսական հիմքերը և անցկացման եղանակները:
5. Փորձարարական եղանակով հետազոտել հոր կերպարը և նրա դերի առանձնահատկությունները շեղվող վարք դրսերող դեռահասների պատկերացումներում և նրանց դաստիարակության համակարգում:
6. Էնափրիկ հետազոտությամբ ուսումնասիրել շեղվող վարք դրսերող դեռահասների իդեալները:
7. Մշակել հոգեբանական և մեթոդական հանձնարարականներ երեխաների վարքի շեղումների, ծնողների հետ նրանց հարաբերությունների խաթարումները նախականինելու և հաղթահարելու նպատակով:

**ՀԵՏԱԳՈՒԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՃՔԸ գարզացման, դետերմինիզմի և համակարգայնության սկզբունքներն են, որոնք ուղղված են դեռահասության շրջանում դելինկվենտ վարքի առաջացման բացատրությանը, պայմանավորված են դեռահասների գարզացման օրինաչափություններով, որոնց հիմքում էվոլյուցիոն գարզացումը փոխարինվում է ռևոլյուցիոն շրջանով, իսկ ես-համակարգի շրջանակում**

Վերակառուցվում են դեռահասի ինքնագիտակցությունը, ինքնաճանաչումը, ինքնակառավարումը: Դելինկվենտ վարքի ուսումնափրումը պայմանավորված է բազմաթիվ իրողություններով. տարաբնույթ պատճառների համակարգով, ընտանեկան անառողջ հարաբերություններով, անձի անհատական հոգեբանական առանձնահատկություններով և այլն: Դելինկվենտ վարքի առանձին բաղադրիչների հետագոտությանը ամբողջացվում է դելինկվենտության ընդհանուր տեսությունը՝ իմնվելով անհատական սկզբունքի կիրառման վրա, քանի որ դելինկվենտության յուրաքանչյուր դրսւորում ունի իր դետերմինիստական համակարգը և այդ պատճառով կիրառելի է հոգեբանամանակավարժական անհատական մոտեցումը:

Հետազոտության տեսական հիմքերն են՝ անչափահասների շեղվող ասոցիալական վարքի ուսումնափրումը և ջրանակում Լ. Ջյութինի, Ս. Արզումանյանի, Վ. Իրովակովի, Լ. Ֆիլոնովի, Վ. Կուդրյավցևի, Ի. Էգոչևի, Ս. Ենիկևի, և Վ. Վասիլևի կատարած հետազոտությունները, տեսական վերլուծություններն ու իմնական եզրակացությունները, ինչպես նաև Ս. Ռուբինչյանի, Ա. Լեռնտևի, Բ. Անանևի, Լ. Վիգոտսկու, Լ. Բոժովիչի, Ս. Խուդոյանի տեսական հիմնադրույթները նպատակամետ վարքի ձևավորման և այդ գործընթացում սոցիալական ներգործությունների դերի մասին: Եվ վերջապես, տեսական հիմք են ծառայել սոցիալականացման Խ. Ռենժմիխտի, Է. Երիկսոնի, Ռ. Բեռնսի, Ֆ. Դոլտոնի, Ո. Կենարելի, Խ. Ժինովի, Դ. Քայարոդի, Ռ. Քայարոդի և ուրիշների տեսությունները:

### Հետազոտության մեթոդները և մեթոդական ծրագիրը.

- անամնեզի
- փաստաթղթերի վերլուծության
- զրուցի մեթոդ
- «շարադրությունների»
- ինքնակենսագործության
- անկախ բնութագրերի ընդհանրացման
- վարքի և գործունեության արդյունքների անփոփոխ մասին
- «անչափահասների անձի ուսումնափրության և վերադաստիարակության մեթոդական ծրագիրը»

### Հետազոտության գիտական նորույթը և տեսական նշանակությունը:

Հիմնավորվում է, որ ինչպես տղաների, այնպես էլ որոշ աղջիկների դելինկվենտ վարքի ձևավորմանը նպաստում է հանցագործ աշխարհը որպես առնականության հիեալ ընկալելու իրողությունը:

Ապացուցվում է, որ ընտանիքում հոր դերի և դեռահասի պատկերացումներում հայրական կերպարի աղավաղումները կարևոր պայման են դելինկվենտ վարքի ձևավորման գործընթացում:

Ներկայացվում են դելինկվենտության ձևավորմանը միտված դեռահասի անհատական հոգեբանական առանձնահատկությունները:

Մշակվել են դեռահասների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքների համարի:

**Հետազոտության գործնական նշանակությունը:**Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել դելինկվենտ երեխաների հետ տարվող հոգեբանամանկավարժական աշխատանքների և հոգեթերապիայի ընթացքում, ընտանեկան հոգեբանական խորհրդատվության համակարգում, դեռահասների դելինկվենտական հակումների և անբարենպաստ ընտանիքների պիտորոշման գործնթացում, տարիքային հոգեբանության, դեռահասների հոգեթերապիայի, շեղվող վարքի ուժումնասիրման դասընթացներում:

**Հետազոտության հուսալիությունը և հիմնավորվածությունը** ապահովվել են.

ա) դեռահասների շեղվող վարքի հոգեբանական հիմնախնդրի շուրջ կատարված հիմնարար հետազոտությունների վերլուծությամբ, հիմնադրույթային մոտեցումների և մեթոդաբանությունների ուսումնասիրությամբ, հիմնավոր տեսական բազայի մշակմամբ,

բ) հետազոտության աջև դրված նպատակների և խնդիրների լուծման համար աղեկված և արդյունավետ մեթոդների և մեթոդիկաների կիրառմամբ, դրանց բազմազանությամբ,

գ) հետազոտվողների բավարար քննակությամբ և հետազոտության ընթացքում ստացված արդյունքների սոցիալ-հոգեբանական և մարեմատիկական վերլուծությամբ,

դ) էմպիրիկ աշխատանքների երկարատև կազմակերպմամբ, ինչպեսնաև դելինկվենտների և նորմալ վարք ունեցող դեռահասների համեմատական հետազոտությամբ:

**Պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները:**

1. Հիմնախնդրին առնչվող գրականության վերլուծությունը ցույց է տալիս, որ դեռահասության տարիքում շեղվող վարքի հոգեբանական հիմնախնդրի շուրջ կատարված հետազոտություններում առավելապես քննվում են շեղվող արարքների արտաքին պատճառները, մինչդեռ հարաբերականորեն թույլ են հետազոտված դելինկվենտության տարիքային-հոգեբանական և սեռային գործոնները, իոր, որպես ընտանիքում «օրենքի», կարգի խորհրդանշի դերը դելինկվենտության ձևավորման գործում, ինչպեսնաև անձի անբարենպաստ որակների՝ որպես դելինկվենտությանը նպաստող գործոնի, նշանակությունը:

2. Դեռահասների դելինկվենտ վարքի ձևավորմանը նպաստում են դեռահասության տարիքով պայմանավորված սեռային նույնականության որակական վերակառուցումները: Հատկապես տղա դեռահասների շրջանում որպեսառնականության իդեալ և ընդորինակման օբյեկտ հանդես է գալիս հանցագործ աշխարհը:

3. Դեռահասի համար հայրը հանդես է գալիս որպես կարգապահության, պատասխանատվության, «օրենքի» կրող, զապող գործոն, և եթե այդ հայրական ֆունկցիան այս կամ այն պատճառով պատշաճ ձևով չի հրականացվում, դեռահասի մեջ հոր կերպարը, հետևաբար նաև ներքին օրենքը, կարգապահության, պատասխանատվության մասին պատկերացումներն աղավաղվում են՝ հանգեցնելով դելինկվենտ վարքի:

4. Դելինկվենտության ծևավորման համար հոր է հանդիսանում որոշակի բացասական անձնային բնութագրերի համալիրը, որը ներառում է բնավորության բացասական գծերը (ծովություն, անպատասխանատվություն, եսափրություն, ագրեսիվություն, անհանդուրժողականություն և այլն), հակահասարակական դիրքորոշումները, բացասական վերաբերմունքը դպրոցի նկատմամբ (բացասական վերաբերմունք ուսուցչի, ուսնան, դպրոցական կարգուկանոնի և այլնի նկատմամբ): Դելինկվենտ վարքով դեռահասների անձնային բացասական որակների ու հատկանիշների, անհարմարվողական վարքի դրսնորումների, օրինականության և բարոյականության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի նախազգուշացման ու հաղթահարման արդյունավետությունն առավելապես պայմանավորված է այդ ուղղությամբ ծերնարկվող աշխատանքների անհատականացումով:

**Հետազոտության փորձաքննությունը** կատարվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական նանկավարժական համալսարանի «Զարգացման և կիրառական հոգեբանություն», «Հոգեբանության տեսության և պատմություն» ամբիոնների նիստերում, հոգեբանների որակավորման բարձրացման դասընթացներում, Երևանի թ. 25 և թ.4 հանրակրթական դպրոցների մանկավարժական խորհուրդներում, Վարդաշենի հակասոցիալական վարք դրսնորած երեխաների հանրապետական թ. 1 կրթահամալիրում:

**Աշխատանքի կառուցվածքը:** Աստենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլուխց, ընդհանուր եզրակացություններից, գրականության ցանկից (152 անուն) և հավելվածներից: Աշխատանքի ընդհանուր ծավալը՝ 148 է:

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աստենախոսության ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, տրված են հետազոտության նպատակը, առարկան, օբյեկտը, վարկածը, խնդիրները, սահմանված են պաշտպանության ներկայացվող դրույթները: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունն ու ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Դեռահասների շեղվող վարքի սոցիալ-հոգեբանական պատճառները և դրանց հաղթահարման ուղիները» գլխում ներկայացվում է առաջադիր խնդրի համառոտ ակնարկը՝ սկսած անտիկ աշխարհից: Այս գլխում դիտարկվել են Դեմոկրիտի, Սոկրատոսի և Արիստոտելի անօրինական վարքի վերաբերյալ զաղափարները, միջնադարի քրեական օրենսգրքերը, որոնք ուղղակիորեն վերաբերվում են օրենքը խախտած երեխաներին: Ներկայացված և մեկնարաբանված են կենսաբանական (Չ. Լոմբրոզո, Է. Ֆերիի, Էնրիկո, Մարրոն) և սոցիալական գործոններով որոշվող հակահասարակական վարքին (Ֆրանց Լիստ, Սիրիլ Բարտ, Ի. Հոֆման, Լեներտ, Բեկեր) վերաբերվող հիմնական մոտեցումները:

Առաջին գլխում վերլուծվում է դեռահասների դելինկվենտ վարքի ընդհանուր հոգեբանական բնութագիրը՝ որպես անցումային և կենսաբանորեն դրսորվող սեռական հասունացման շրջան: Սոցիալական ոլորտում դեռահասության փուլը հանդես է գալիս որպես առաջնային սոցիալականացման շարունակություն:

Բացահայտվում են շեղվող վարքով դեռահասների բարոյահոգեբանական, սոցիալական հասունության ինքնագիտակցության մակարդակը, ինչպես նաև դելինկվենտ վարքի հանգեցնող մի շարք այլ գործոններ:

Տեսական հետազոտության ընթացքում վերլուծվել են.

- Անչափահաս իրավախախտի անձնավորության կազմավորման հոգեբանա-քրեաբանական տեսությունը շեղվող և ասոցիալական վարքի ոլորտում, Լ. Ջյուբինի, Վ. Պիրոժկովի, Լ.Ֆիլոնովի, Վ.Կուդրյավցևի, Ի. Իգորշկի, Ս. Ենիկելի, Վ. Կասիլիկի և այլոց ուսումնասիրությունները:

- Ս.Ռուբինշտեյնի, Ա.Լեննտլի, Բ.Անանևի, Լ.Վիգորովի, Լ.Թոժովիչի, Ս.Խուտյանի հիմնադրույթներն անձի և նրա վարքի ծևավորման և սոցիալական ներգործությունների դերի մասին, հատկապես Է.Էրիկսոնի, Ո.Բեռնսի, Ֆ.Դոլտոյի, Ռ.Կենարելի և Խ.Ժինովի սոցիալականացման տեսությունները:

Ինչպես նաև բազմաթիվ մասնագետների (Ա. Ն. Սուխով, Ա. Ա. Բոդայով, Ա. Ա. Դերկաչ, Վ. Ե.Իգորև և այլոց) կողմից առաջադրված դրույթները, որոնցում տուբեկուլիտ սոցիալական վարքի շեղումը (դելինկվենտ, հանցավոր վարքը) առաջին հերթին պայմանավորված է սոցիալական դեգաղապտացիայով:

Դասական հոգեբերլուծության տարածված տարրերակում ծևավորվել է իոր՝ որպես և աղջկա, և տոպայի վրա պարտադիր սահմանափակումներ դնող «կաստրատորի կերպարը»: Հենց հայրական բարոյական սկզբունքներն ու արժեքներ են հիմք հանդիսանում երեխայի «Գեր-Ես»-ի ծևավորման համար(Յա. Ի.Կորյակով):

Տվյալ գլխում վերլուծվել են ընտանիքի այն տիպերը, որոնք նպաստում են անչափահաս դեռահասների վարքի շեղումների առաջացմանը:

Ներկայացվել են դեռահասների դելինկվենտ վարքին նպաստող օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները: Մ.Վերմեջի, Վ.Կուդրյավզեկի և Գ.Խաչիկյանի հետազոտություններում հանցավոր գործողության օբյեկտիվ սուբյեկտիվ կողմերը նույնականացվում են օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետ:

Աստենախոսության այս գլխում ուսումնասիրված է սեռային ինքնագիտակցության վերակառուցման և դեռահասության տարիքում դելինկվենտ վարքի կապի հիմանխնդիրը: Տգնաժամի ընթացքում տեղի է ունենում սեռային նույնականության, ես-կոնցեպցիայի, ինքնազնահատականի ձևավորումը, քանի որ դեռահասը ծգուում է ինքնահասստատվել որպես տղամարդ (կին): Հետազոտության ընթացքում հիմնավորվել է Ս. Խուդոյանի տեսակետն այն մասին, որ դեռահասը ստեղծում է առնականության (իգականության) իդեալներ, մոդելներ, նմանակման օբյեկտներ, և հաճախ, հատկապես տղաների համար, որպես այդպիսիք հանդես են զալիս հանցագործ աշխարհի ներկայացուցիչները: Հենց այս հանգամանքն էլ նպաստավոր պայմաններ է ստեղծում դելինկվենտության համար: Ուստի, աշխատանքում անդրադարձ է կատարվել սեռային ինքնահասստատման, նույնականության, սեռային ես-կոնցեպցիայի ձևավորման և դելինկվենտ վարքի դրսևորման ձևերին:

Հետազոտության մեջ առաջին անգամ արանձնացվել է երեխայի անձի ձևավորման գործում հոր դերի հիմնախնդիրը, քանի որ ժամանակակից հոգեբանության մեջ հոր դերը երեխայի դաստիարակության գործում հարաբերականորեն թույ է հետազոտված հատկապես էմաֆիրիկ առումով, մինչդեռ երեխայի անձի զարգացման գործում հոր բացարիկ դերը կարևորեն են բազմաթիվ գիտնականներ (Ա.Աղեր, Լ.Խյել, Դ.Զիգլեր, Տ.Վ.Անդրեև, Ա.Ի.Զախարով, Դ.Վիտկին):

Աստենախոսության երկրորդ՝ «**Դեռահասների դելինկվենտ վարքի փորձարարական հետազոտություն»** գլուխում ներկայացված են հետազոտության կազմակերպման նպատակը, խնդիրներն ու մեթոդիկան: Հետազոտությունները կազմակերպվել են երեք փուլով. Նույրարաշեն N18 հատուկ դպրոցում, ՀՕՖ կազմակերպության «Երեխաների ընդունման և կողմնորոշնան կենտրոնում» և Վարդաշենի հակասոցիալական վարք դրսևորած երեխաների հանրապետական թ.1 կրթահամալիրում: Բացի դրանից, հանրակրթական դպրոցներում համեմատվել են պրոբլեմային վարքի դրսևորումները նորմալ վարքով, սակայն ցածր առաջադիմություն և անբավարար վարք ունեցող երեխաների սոցիալական և միջանձնային հարաբերությունների ընթացքում դրսևորած վարքածերի հետ:

Հետազոտությանը մասնակցել են 144 դեռահաս (13-16 տարեկան), որից՝ 84 դեռահաս- դելինկվենտ (55 տղա, 29 աղջիկ): Դեռահասներից 60-ը կրթական համակարգից դրւում մնացածներ էին, որոնք գրադվում էին թափառաշրջիկությամբ, մուրացկանությամբ, գողության փորձեր կատարելով և այլ անօրինական վարք դրսևորելով: Դելինկվենտ-

Դեռահասներից 20-ը միակողմանի ծնողազուրկ էին, 5-ը՝ երկկողմանի ծնողազուրկ, 15-ը՝ անուսնալուրժված ընտանիքներից էին, մնացածները՝ 2 ծնողներ ունեցողներ: Հետազոտությանը մասնակցել են նաև 62 դեռահասներ՝ հանրակրթական դպրոցի 8-9-րդ դասարամի աշակերտներ:

Առաջին փուլի նպատակն է պարզել դեռահասների կողմից կատարած օրինախախտումների և իրավախախտումների պատճառները, ինչպես նաև անչափահասների սեռատարիքային բնութագրերին վերաբերող տվյալների վերլուրծությունը: Որպես հետազոտության մեթոդներ կիրառվել են զորուցի և անկախ բնութագրերի ընդանրացման մեթոդները:

Փորձարկումների հաջորդ փուլում հավաքագրել ենք ուսումնափրկող անչափահասների շեղվոր վարքի բոլոր ընդհանուր տվյալները, այդ նպատակով ուսումնասիրվել են նրանց անձնական գործերը, ուսումնական առաջադիմությունը, նրանց ընտանիքներին ուղղված հարցումները: Դելինկվենտ դեռահասների ուսումնափրկած հոգեբանամակավարժական անամնեզի հիման վրա առանձնացվել են անչափահասներին հիմնական խնբերը՝ ըստ շեղվոր վարքի նախնական տվյալների:

- Առաջին խմբում ընդգրկվել են այն դեռահասները, ովքեր առանձնապես սեր չեն տածում ուսման հանդեպ, չեն ուզում հաճախել դպրոց, ծեռք բերել գիտելիքներ կոնկրետ առարկաներից, պերսանենտ (Երկարատև, մշտական) խախտում են հասարակական նորմերը:
- Երկրորդ խմբում այն դեռահասները, ովքեր հաճախ խախտում են հասարակական-բարոյական նորմերը, դրսնորում են աստցիալ վարք ինչպես դպրոցում, այնպես էլ միջավայրում, հակված են օրինախախտում վարքի:
- Երրորդ խմբում՝ նրանք, ովքեր տարաբնույթ զանցանքներ են գործել, գրանցված են եղել անչափահասների տեսչություններում, քանի որ կատարել են իրավախախտումներ կամ քրեորեն պատժելի արարքներ:

Երրորդ փուլում հետազոտություններն անցկացվել են ՀՕՖ կազմակերպության «Երեխաների ընդունման և կողմնորոշման կենտրոնում»: Այս փուլի անցկացման նպատակն է բացահայտել շեղվոր վարք դրսնորող դեռահասների ընտանիքում հոր կողմից իրականացվող ֆունկցիաների լիարժեքությունը և դեռահասների վերաբերմունքը հոր նկատմամբ, իդեալի պատկերացումը, նաև բացահայտել դեռահասների դիրքորոշումները վարքի բարոյական նորմերի վերաբերյալ: Կիրառվել են զորուցի մեթոդը և «Դրական և բացասական դիրքորոշումների բացահայտման մեթոդիկան»:

Դեռահասների դելինկվենտ վարքի ծևափորման գործում անչափ մեծ է հոր դրական դաստիարակչական ազդեցության դերը: Զրոյցի, շարադրությունների և հացցման մեթոդներով կատարած հետազոտությունները ցույց տվեցին, որ գորեթ բոլոր դելինկվենտ

Դեռահասների մեջ աղավաղված է հոր կերպարը, հայրը կամ ընդհանրապես չի մասնակցում դեռահասի դաստիարակությանը կամ բացասական ազդեցություն, ոչ աղեկված ծևով է վերաբերում դեռահասներին:

Տվյալ գլխում անդրադարձել ենք դեռահասների անբարենպաստ անձնային գործոնների ախտորոշմանը, ընդգծելով բացասական հոգեբանական նորագոյացումների առաջացումը, ինչպես նաև բարոյալքով անձի կառուցվածքաստեղծ բաղադրամասերի կազմավորման ընթացքը:

Եզրափակիչ փոլում «Իմ հայրը» և «Ում կուզե՞ի նճանվել» թեմաներով (ըստ շարադրությունների նյութերի) հետազոտվել են դեռահասների՝ մեփական հոր մասին ունեցած կարծիքները և նրանց «իդեալի» պատկերացումները: Ստորև ներկայացվում են արդյունքները:

### **Օրինախախտ և նորմատիվային դեռահասների խմբերի տոկոսային տվյալները հոր մասին ունեցած կարծիքների և «իդեալի» վերաբերյալ**

Օրինախախտների խումբ	%	Նորմատիվային խումբ	%
բացասական կարծիք և վերաբերմունք հոր նկատմամբ, որոնցից 20-ը՝ (12 տղա, 8 աղջիկ) մերժում են հորը	71	դժգոհություն հայրերից՝ խստորոշական, ավտորիտարության, ազատության սահմանափակման պատճառներով	20
դաստիարակության ընթացքում կիրառվող ֆիզիկական պատժի տարեր տեսակներ՝ ծեծ, կողմիտ վերաբերմունք	9	դաստիարակության բարձիթողություն	10
հարաբերականորեն գոհեն իրենց հայրերից	10	հարգում են և օրինակ վերցնում հորից	55
հայրերը խրախուսում են հակաօրինական վարքի ձևերը	5	հայրը իդեալ է	13
հայրերը չարաշահում են ալկոհոլը և արհասարակ չեն զբաղվում երեխայի դաստիարակությամբ	5	ալկոհոլի չարաշահում հոր կողմից	2


**Հետազոտության արդյունքների վերլուծություն:** Ամփոփելով հետազոտվող իիմնախսնդրի շուրջ կատարած էճափիրիկ ուսումնասիրությունները՝ ներկայացվել են իրավախստ դեռահասնելինկվենտների վիճակագրական տվյալները, մատնանշվել է ընտանեկան

կարգավիճակը՝ ըստ առանձին տարիների, կազմվել են բնութագրեր և հիգիենական անամնեզ ուսումնասիրվող բոլոր անչափահասների համար:

Դեռահասների իրավախախտ վարժագծի սոցիալ հիգիենական պատճառները բացահայտելու և դրանց հաղթահարման համար առանձնացրվել են հետևյալ վերլուծությունները.

1. ըստ անչափահաս երեխաների ընտանիքների և օրինախախտների թվաքանակի,


### **Ուսումնասիրված երեխաների ընտանիքների բնութագրական տվյալները**



### **Իրավախախտ դեռահաս դելինկվենտների տվյալները ըստ ընտանեկան կարգավիճակի**

	Բնութագրիչներ	Թիվ
1	Երկու ծնող ունեցող	73
2	Կազմալուծված ընտանիք	49
3	Խնդիր ունեցող ընտանիք	66
4	Տնտեսապես անապահով ընտանիք	50
5	Բազմանդամ ընտանիքներ	26
6	Կրկնակի և ավելի անուսանություններ	26
7	Երկկողմանի ծնողազուրկ	2
8	Ազատագրված ծնողներ ունեցող	2
9	Մտավոր (հոգեկան) հիվանդ ծնողներ	26
10	Միաձնող ընտանիք	67

**Իրավախախտ դեռահաս դեմքնակենտրոների տվյալները քստ սերի**



2. տարաբնույթ օրինախախտումներ կատարած անչափահաս դելինկվենտների հոգեբանական բնութագրերը,
  3. դեռահաս դելինկվենտների անձնային բնութագրերը, որոնք ճեղք են բերվել մի շարք հոգեբանական մեթոդների կիրառմամբ և վելուցութայմբ:

Ղերահաս նելինկվենտների վարքագծի վերաբերյալ ծերք բերած նյութերը ցույց են տալիս են, որ հետադեսյան և հետպատերազմային շրջանում կրկնակի չափով ավելացվել են իրավախախտղները, քան այսօր, չնայած ավելի են փոփոխվել նրանց ներկայիս ընտանեկան կարգավիճակները և գործող չափանիշները:

Նկատի ունենալով, ո՞յ

- 1) 1997-1998 թվականներին հրավախախտողների թվաքանակն ամենաբարձրն էր, ըստ որում միակողմանի և երկկողմանի ծնողագործ երեխաների թվալանակը առավելագույն էր:
  - 2) 1999-2000 թվականներին հրավախախտողների թվաքանակը որոշակիորեն նվազել էր, սակայն պահպանվում էր միակողմանի ծնողագործությունը թվաքանակը, մինչդեռ երկկողմանի ծնողագործ դեռահասների թվաքանակը նվազել էր:
  - 3) 2001-2002 թվականներին անշափահաս հրավախախտողների թվաքանակը կրկին նվազեց և այս թվաքանակը պահպանվեց մինչև 2004 թվականը, սակայն այս ժամանակահատվածում ևս գերիշխում էր միակողմանի ծնողագործ երեխաների թվաքանակը:
  - 4) 2003-2004 թվականներին օրինախախտողներին թվաքանակը որոշակիորեն պահպանվեց, սակայն 2004-ի վերջում նկատվում էր նվազում, ինչը բացատրվում էր անշափահասների ընտանիքների սոցիալական վիճակի բարելավմամբ (այդ թվականին գրանցված էր երկու ծնող ունեցող անշափահասների ամենափոք թվաքանակը):
  - 5) 2005-2011 թվականներին նկատվեց օրինախախտողների թվաքանակի դանդաղ անկում, սակայն այն դեռևս չբացարձեց միակողմանի ծնողագործ դերին կվենտների մեջ թվաքանակի արկայությունը:

Ուսումնասիրելով և համեմատելով ուսուցման հանդեպ դեռահասների վերաբերմունքը և դիրքորոշումն (ըստ հավելված 1-ի), հանգել ենք այն եզրակացության, որ՝ ա) հատուկ դպրոցի սաների մոտ գերիշխում է դպրոցի հանդեպ բացասական վերաբերմունքը (20%)՝ ի տարբերություն հանրակրթական դպրոցի աշակերտների վերաբերմունքի (4,5 %), բ) վատ վերաբերմունքը ուսուցիչների նկատմամբ՝ հատուկ դպրոցում (34%), հանրակրթական դպրոցում (9%), գ) ծնողների հետ դժվար հաղորդակցման պատճառով կոնֆլիկտները՝ հատուկ դպրոցում (24 %), հանրակրթական դպրոցում (6%), դ) կոնֆլիկտներ ընկերների հետ միմյանց չհասկանալու պատճառով՝ հատուկ դպրոց (34%), հանրակրթական դպրոց (21,2%), ե) անձնական պահանջների դրդումը զանցանքներ կատարելիս՝ հատուկ դպրոց (30%), հանրակրթական դպրոց (13,6%):

Այսպիսով, վերը նշված տոկոսային հարաբերակցությունից ակնհայտ երևում է, որ դեռահասների դելինկվենտ վարքին նպաստող՝ դպրոցի և ուսուցման նկատմամբ նեգատիվ դիրքորոշումը հետագայում դարնում է ոչ աղեկված վարքի և դժվարադաստիարակելիության հիմք՝ պահանջելով անհատական մոտեցման և դաստիարակության հատուկ մեթոդներ:

Այս հետազոտությունները նաև ցույց տվեցին, որ իդեալների որոնման գործընթացում դելինկվենտ դեռահաս տղաները հանգում են հանցագործ աշխարհի ներկայացուցիչներին, նույնացնում են իրենց նրանց, նամանակում նրանց վարքը, ինչն էլ կարևոր դեռ է խաղում դելինկվենտության ձևավորման գործընթացում:

Ընդհանրացնելով հետազոտության արդյունքների վերլուծությունը, կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- Հետախոյան և հետպատերազմյան շրջանում դեռահասների կողմից կատարած օրինախախտումները 1998 թվականին հասել է ամենաբարձր թվաքանակի: Չնայած հաջորդ տարիներին որոշակի նվազեցում է նկատվել օրինախախտումներ կատարածների ընդհանուր թվաքանակում, այդուհանդերձ բարձր են միակողմանի և երկկողմանի ծնողազորկ դեռահաս դելինկվենտների նիշերը, և բնականաբար ավելի սակավ թվաքանակ են կազմում երկու ծնող ունեցող երեխաները:
- Հանդես են եկել դեռահասների դելինկվենտ վարքին նպաստող այնպիսի տրիեկտիվ գործուներ, որոնք պայմանավորված են անձի բացասական անձնային որակների և սոցիալական միջավայրի, օբյեկտիվ գործուների անմիջական անբարենպաստ ներգործությամբ:
- Դեռահասների դելինկվենտ վարքագիծն ունի փուլային զարգացման միտում: Հերաբերությունների սկզբնական դրսևորման լատենտ փուլում խարարվում են «Երեխա-ծնող», «Երեխա-ընտանիք», «Երեխա-մանկավարժ» հարաբերությունները,

այնուհետև աստիճանաբար ավելի են լարվում «երեխա-ծնող» փոխադարձ հարաբերությունները, քանի որ սաստկանում են նորանց միջև առկա հակասությունները:

- Դելինկվենտ դեռահասները հաճախ ապրում են հոգեբանական օտարացում ինչպես ընտանիքում, այնպես էլ ուսումնադաստիհարակական կոլեկտիվում, միաժամանակ խաթարելով հարաբերությունները ծնողների, մանկավարժների և հասակակիցների հետ, ինվանավորչություն գտնելով տարիքով իրենցից մեծ, ասոցիալ վարք ունեցող դեռահասների կամ պատանիների կողմից:
- Ծրջապատող այլ մարդկանց նկատմամբ գրաված դիրքով և գնահատման տեսանկյունով դեռահասների մեծամասնության մեջ բացահայտվել է որոշակի անկայունություն, կրնֆլիկտայնություն, համառություն և միաժամանակ անվստահություն: Առկա է անկայուն ինքնազնահատականը: Վերաբերմունքը սեփական անձի նկատմամբ բնորոշվել է զուտ անձնական հայացքների և համոզմունքների տեսանկյունով:

**«Դեռահասների դելինկվենտ վարքի նախազգուշացման և հաղթահարման ուղիները»** գլխում դիտարկված են դեռահասների դելինկվենտ վարքի ալրոֆիլակտիկայի բովանդակությունը և իրականացման պայմանները: Նկատի ունենալով, որ սոցիալական ինքնորոշումը շեղվող վարքով դեռահասների դաստիհարակության գլխավոր խնդիրներից է և այն կապված է երկու կարևոր պայմանների իրականացումից: ա) Եթե այս երեխաներն ընդգրկվում են իրական սոցիալական հարաբերությունների մեջ, այսինքն՝ նրանց մեջ ձևավորվում է գործունեության հանդեպ անձնային վերաբերմունք, բ) այս երեխաների ինքնաիրացումը տեղի է ունենում սոցիալական փոխագրեցությունների ընթացքում:

Այս պայմաններում երեխաներին հնարավորություն է տրվում ավելի լիարժեք և ամբողջական ներկայանալ շրջապատողներին, ավելի խորը գիտակցել սեփական «ես»-ի տարրեր կողմերը:

Աշխատանքում այնուհետև ներկայացված է դելինկվենտ վարքով դեռահասների նկատմամբ անհատական մոտեցման հոգեբանական առանձնահատկությունների հաշվառումը ալրոֆիլակտիկ աշխատանքների իրականացման ժամանակ:

Ընելով մեր ուսումնավիրության գերակա նպատակից, պետք է նշենք, որ անհատական մոտեցման սկզբունքներն ու մեթոդները մշակելիս հաշվի են առնվել դելինկվենտ դեռահասների կարևորագույն անձնային դրական որակները, անշափահասների անձի ձևավորման ու զարգացման ընթացքը, որոնք անհրաժեշտ են ոչ միայն ոչ արագտիվ վարքի տեր, այլև նորմայի վարք դրսևորող երեխաներին: Որպես ալրոֆիլակտիկ աշխատանքի

միջոցներ առանձնացվել են դաստիարակության ինքնադաստիարակության հետևյալ մեթոդները.

- համոզմումքի և ինքնահամոզմունքի,
- խթանման և դրդապատճառների,
- ներշնչման և ինքնաներշնչման,
- պահանջների և վարժությունների,
- ինքնակարգավորման և շտկման:

Ղեռահամերի շեղումները նախականխելու նպատակով տվյալ գլխում ներկայացված են նաև մեթոդական հանձնարարություններ ծնողների և մանկավարժների համար:

Կանխարգելիչ միջոցառումների համակարգն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ խնդիրները՝

- մանկավարժական
- սոցիալ-հոգեբանական
- կազմակերպչական
- իրավական

Օրինախստումների նախականխումն արդյունավետ կիամարվի միայն այն դեպքում, եթե պրոֆիլակտիկ աշխատանքներում ներառվեն ոչ միայն ընտանիքը, այլև մերձավոր շրջապատը, քանի որ օրինախստումների էական պատճառը պետք է փնտրել բարոյական դաստիարակության ոլորտում։ Հետևաբար, անշափահաս իրավախստների և օրինախստների նախազգուշացումը կատարվեմ է դաստիարակության տարբեր ոլորտներում, սակայն գլխավորապես բարոյական ներգործության հոգեբանամանկավարժական գործընթացներում։

Անշափահաս օրինախստի անձի մեջ գերակա են այն բացասական կողմերը, որոնք ճնշում են դրական որակների դրսևորմանը, քանի որ տվյալ պարագայում երեխային բնորոշ են ասոցիալ ուղղվածությունը և համապատասխան ասոցիալ դիրքորոշումը։

Շեղվող վարքով դեռահասների հետ անհատական կանխարգելիչ աշխատանքներ իրականացնելիս անհրաժեշտ է, որ անշափահասը համոզված լինի, որ իրեն կստահում և հավատում են։ Պետք է ստեղծել այնպիսի պայմաններ, որ անշափահաս իրավախստները կարողանան զբաղվել հասարակական աշխատանքով, սիրած զբաղմունքով, քանի որ դրանք լավագույն միջոցներն են վարքի ուղղվածությունը փոխելու համար։

Շեղվող վարքի կանխարգելման ոլորտում դեռևս որպես թերություն կարելի է արձանագրել այն, որ դպրոցներում գրեթե չեն գործում հոգեբանական ծառայություններ, որպեսզի «դժվար» վարքով երեխաների հայտնաբերման սկզբնական փուլում արդեն իսկ համապատասխան միջոցներ կիրառվեն։

Այսպիսով, կարելի է ենթադրել, որ օրինախստ և «դժվար» ղեռահասների վերադաստիարակումն արդյունավետ կլինի այն դեպքում, երբ ժամանակին բացահայտվեն երեխայի անձի վրա ազդող դրական և

բացասական գործոնները, ակտիվացվեն առաջինների ազդեցությունը, օբյեկտիվ դրական ներգործությունների կազմակերպման շնորհիվ:

Դեռահասների վարքի շեղումները կանխելու նպատակով առանձնացվել են ծնողներին և մանկավարժներին ուղղված մեթոդական հանձնարարականները:

Դեռահասների դեմքների վարքի կանխման միջոցառումների շղայում ավելի արդիական և կարևոր է ինչպես ուսումնարաստիարակչական, այնպես էլ հոգեբանական միջոցառումների կազմակերպման խնդիրը, որն իրենում ներառում է անչափահան օրինախախտների անձի և դրսորած վարքածների պատճառականության ուսումնափրությունը:

Կատարած ուսումնասիրությունների վերլուծությունը ցոյց է տալիս, որ դեռահասների և ընդհանրապես անչափահասների անձի բարոյական դեգրադացիան՝ ընտանիքի և ծնողների ոչ ճիշտ ներգործության, նրանց անպատճախանատու վերաբերմունքի արդյունք կարող է լինել ինչպես իրենց պարտականությունների, այնպես էլ երեխաններին ներկայացվող պահանջների տեսանկյունով։ Իհարկե, կարևորվում են նաև նոր տնտեսական հարաբերություններին անցնելու դժվարությունները, կեցության մակարդակի կտրուկ իջեցումն ու աղքատությունը, անբարենպաստ պետական և հասարակական փոփոխությունները, հանրապետության երկարատև շրջափակումը և դրանցից ծնվող մի շարք այլ բացասական երևույթները։ Նշված գործոններով կ որոշվում են դեռահասների մեջ առաջացած անբարենպաստ անձնային որակները, որոնք ընկած են նրանց կարգազանց վարքի օբյեկտիվ պատճառականության ներքո։

Ակնհայտ է, որ անչափահասների ոչ աղապտիվ վարքագիծի և անձի բարոյադրավական հոգեկերտության հետ կատարվող բացասական փոփոխությունների կանխարգելունք պետք է նախ և առաջ սկսել դրա խորացմանը նպաստող բացասական գործոնների վերացման գործընթացով։

Այս կենսական և կարևոր հիմնախնդրի լուծումը հնարավոր է սոցիալ-հոգեբանական, կրթադաստիարակչական, հատկապես ուղղիչ աշխատանքների ճիշտ կազմակերպման ինչպես դեռահասի անձի, այնպես էլ նրա անբարենպաստ ընտանիքում, ընտրելով համարժեք և արդյունավետ մոտեցումներ և մեթոդներ։

Ծնող-երեխա հարաբերություններում առաջացած կոնֆլիկտները և անհամաձայնությունները կանխելու և հաղթահարելու նպատակով անհրաժեշտ է հաշվի առնել դեռահասների անձի սոցիալական ախտահարման աստիճանը, ծնողների և մանկավարժների ներգործությունների նկատմամբ նրա ունեցած վերաբերմունքը, ընդհանուր զարգացման մակարդակը։ Այս համալիր խնդրի լուծման համար անհրաժեշտ է ծրագրավորել հոգեբանների, մանկավարժների, հատուկ դպրոցների, անչափահասների ընդունիչ-բախչիչ կայանների, բարձիթողի

Երեխաներով գրադպող հասարակական կազմակերպությունների կանխարգելիչ և հոգեշտկողական աշխատանքները, նախազգուշացման և տվյալ խնդրի հոգեբանական հաղթահարմանն ուղղված միջոցառումների կազմակերպման գործընթացում:

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տեսափորձարարական հետազոտությունների արդյունքները հնարավորություն են ընձեռում կատարելու հետևյալ եզրահանգումները:

1. Դելինկվենտ վարքի դրսերման հիմնախնդրին վերաբերող հետազոտություններում առավելապես քննվում են սոցիալ-տնտեսական և հոգեբանական այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ երկրի անբարենպաստ սոցիալ-տնտեսական իրավիճակը, անբարենպաստ ընտանիքը, սխալ դաստիարակությունը, բացասական անձնային որակները, դեռահասի օտարացումը: Հարաբերականորեն թույլ են հետազոտված անձի անբարենպաստ որակները, դելինկվենտության տարիքային և հոգեբանական գործոնները, մասնավորապես սեռային հնքնագիտակցության ձևավորմանը պայմանավորված իդեալների ստեղծումը, դրանց հետ նույնականացումը, ինչպես նաև հոր, որպես ընտանիքում «օրենքի», կարգի խորհրդանիշի դերը դելինկվենտության ձևավորման գործում:

2. Չնայած վեցին տարիներին նվազել է դելինկվենտ դեռահասների ընդհանուր թվաքանակը, սակայն դեռևս անհանգստացնող է դելինկվենտ վարքագիծ դրսերորդ երեխաների թվաքանակը: Եթե հետախետյան տարիներին մեծամասնբ աստցիալ վարք էին դրսերում երկողմանի ծնողագորկ դեռահասները (և նրանք դրա համար ունեին հիմնավոր պատճառներ), ապա մեր օրերում օրինազանց են դառնում նաև երկու ծնող և ապահով կյանք ունեցողները:

3. Դեռահասների դելինկվենտ վարքի դրսերմանը նպաստում են դեռահասության տարիքով պայմանավորված սեռային հնքնագիտակցության որակական վերակառուցումները, որոնց հետևանքով հատկապես տղա դեռահասները ծգուում են ընդորինակել հանցագործ աշխարհին բնորոշ հարաբերությունները և վարքի ձևերը՝ կողմնորոշվելով առնականության իդեալով՝ դիտելով այն որպես ընդորինակնան օրիեկտ:

4. Դեռահասի համար հայրը հանդես է զալիս որպես կարգի, պատասխանատվության, «օրենքի» կրող: Եթե այս կամ այն պատճառով այդ հայրական ֆունկցիան պատշաճ ձևով չի իրականացվում, ապա հոր կերպարը, հետևաբար նաև կարգապահության և պատասխանատվության նասին պատկերացումներն աղավաղվում են դեռահասի կյանքում՝ հանգեցնելով դելինկվենտ վարքի:

5. Բացասական անձնային բնութագրերի որոշակի համալիրը, որն ներառում է բնավորության բացասական գժերը(ծովություն,

անպատճախանատվություն, եսափրություն, ագրեսիվություն, անհանդուրժողականություն և այլն), հակահասարակական դիրքորոշմանները, դպրոցի հանդեպ բացասական վերաբերմունքը (բացասական վերաբերմունք ուսուցչի, ուսնան, դպրոցական կարգուկանոնի և այլնի նկատմամբ), օրինականության և բարոյականության նկատմամբ անհարգալից վերաբերմունքի դրսնորումներն այս կամ այն չափով հանդես են գալիս որպես դելինկվենտ վարքի իրական ցուցանիշներ:

6. Կյանքի նորմալ ընթացքից շեղված դեռահասներին հոգեբանական օգնություն ցուցաբերելու կարևոր պայմաններից են՝ դեռահասների հետ հոգելոր կապի ամրապնդումը, բնափորության և խարնվածքի պարբերաբար ուսումնափրումը, ընտանեկան դրության՝ նյութական և բարոյական պայմանների, ընկերական միջավայրի ու շրջապատի ազդեցության իմացությունը, միջմանց նկատմամբ վստահության ձեռք բերումը:

7. Հասուկ դպրոցների անշափահասների հետ տարվող դաստիարակչական բնույթի աշխատանքներում պետք է հաշվի առնելուն մի քանի կարևոր հանգամանքներ. ա) անշափահասները պետք է գիտակցեն, որ իրենց գործադրած ջանքերն անտեղի չեն, այսինքն՝ կատարած աշխատանքն արդյունք կունենա, բ) կատարվող աշխատանքը պետք է հետաքրքրական և իրապուրիչ լինի, գ) հանձնարարվող աշխատանքի կամ առաջադրանքի նպատակը պետք է որոշակիորեն պարզ և հասկանալի լինի երեխաններին, դ) պետք է անշափահասների շրջանում խթանվի աշխատանքի հանդեպ պարտքի և պատասխանատվություն զգացումը:

Աւելանախոսության հիմնական բովանդակությունն արտացոլված է հեղինակի հրատարակած հետևյալ աշխատանքներում.

- Գևորգյան Ն. Է., Դեռահասների թափառաշղթիկությունը և մոլորացանությունը որպես սոցիալ-հոգեբանական հիմնախմնիք: Հոգեբանության և մանկավարժության արդիական հիմնախմնիքներ: Հանրապետական գիտաժողովի նյութերի ժողովածու, Գյումրի 2003, էջ 22-25
- Գևորգյան Ն. Է., Սոցիալական միջավայրի գործոնների ազդեցությունն անշափահասների դելինկվենտ վարքի ձևավորման ընթացքում, Գիտական տեղեկագիր №1(4), Երևան 2006, էջ 9-13
- Գևորգյան Ն. Է., Психологическое своеобразие правонарушений, совершенных несовершеннолетними в нынешних условиях, Психология и жизнь, Ереван, «Зангак 97», 2006, № 1-2, с.34-38
- Գևորգյան Ն. Է., Система самооценок и ценностей у подростков с делинквентным поведением, «Кантекс», 2006, 4(29), с.215-219
- Некоторые стороны психокоррекции и ранней профилактики педагогической запущенности подростков Психология и жизнь, N изд. “Зангак-2011” Еր.-2011 г. (3-4) стр. 14 – 18

**ГЕВОРГЯН НАТАЛЬЯ ЭДУАРДОВНА**

**СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИЕ ПРИЧИНЫ ОТКЛОНЯЮЩЕГОСЯ  
ПОВЕДЕНИЯ ПОДРОСТКОВ И ПУТИ ИХ ПРЕОДОЛЕНИЯ**

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.05 "Возрастная и педагогическая психология".

Защита диссертации состоится 04 марта 2014г. в 12<sup>00</sup> часов на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК РА, действующем при Армянском государственном педагогическом университете им. Х. Абовяна, по адресу: 0010, г. Ереван, ул. Тиграна Меца 17.

**РЕЗЮМЕ**

**Актуальность исследования:** Исторически обоснована закономерность, что рост правонарушений и преступлений фиксируется в основном в тех странах, где были войны как естественного, так и техногенного характера, различные естественные и социальные потрясения, а также катаклизмы. В таких государствах, как правило, снижается уровень бытия населения, нарушаются социально-экономические и моральные основы семьи, увеличивается число бездомных подростков, лишенных родительского внимания, любви и воспитания, увеличивается число детских домов и организаций, занимающихся общественным воспитанием несовершеннолетних, в общественное сознание включаются инородные идеи. Актуальность исследования обусловлена тем, что в причинности отклоняющегося поведения подростков акцентируется негативное воздействие семьи на становление личности подростка, а также роль отца в семье, как "закононосителя" и субъекта подражания в воспитательном процессе несовершеннолетнего.

**Объект исследования:** причинность отклоняющегося поведения подростков.

**Предмет исследования:** роль полового самоутверждения подростков в цепи причинности делинквентного поведения и роль отца в этом процессе.

**Основная цель исследования:** выявить социально-психологические причины отклоняющегося поведения подростков, в частности роль отца в процессе формирования делинквентного поведения.

**Согласно научной гипотезе** исследования: Формирование делинквентного поведения подростков - полидемеринистическая реальность.

**Исходя из цели исследования предложены следующие задачи:**

1. анализ причинности делинквентного поведения в научных исследованиях психологов и педагогов,

2. с помощью анализа теоретических основ исследования, выделить разновидности отклоняющегося поведения, обосновать сущность термина "деликвент", грани исследования данного типа поведения

3. исследовать роль отца в цепи причинности деликвентного поведения подростков

4. с помощью анализа существующих исследований и по заключениям наших исследований, разработать теоретическую основу наших эмпирических исследований причинности деликвентного поведения подростков

5. подвергнуть эмпирическим исследованиям роль отца в восприятии подростков с деликвентным поведением, а так же особенности роли отца в системе их воспитания

6. подвергнуть эмпирическому исследованию представления об идеалах у подростков с деликвентным поведением. Разработать психолого -методические рекомендации для родителей подростков с деликвентным поведением

**Научная новизна исследования:** выражается в том, что

1. процессу формирования деликвентного поведения несовершеннолетних содействует восприятие приступного мира как идеала мужественности.

2. акцентируется, что искажение роли отца в семье и отцовского образа у подростков является одним из главных причин формирования деликвентного поведения подростков.

3. представляется комплекс индивидуальных психологических особенностей которые содействуют формированию отклоняющегося поведения.

4. разработана система психолого-педагогических заданий для индивидуальной работы с подростками и с их родителями.

**Практическое значение исследования:**

Полученные данные могут быть использованы педагогами-психологами в их практической работе со семьями несовершеннолетних. Разработаны задания и для педагогов-психологов работающих в школе.

**В первой главе** диссертации представлен краткий исторический обзор о проблеме отклоняющегося поведения.

**В второй главе** представлены методы и организация исследования, анализы результатов, полученных экспериментальным путем.

**В третьей главе** предлагаются методические рекомендации по профилактике для родителей и учителей для предотвращения отклоняющегося поведения у несовершеннолетних.

**Структура работы:** диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и приложений.

По теме диссертации опубликованы пять научных статьи.

## GEVORGYAN NATALYA EDUARD

### "SOCIAL-PSYCHOLOGICAL REASONS OF DEVIANT BEHAVIOR OF TEENAGERS AND THE WAYS OF OVERCOMING THEM"

Thesis for degree of candidate of psychological sciences, speciality  
19.00.05 "Age and pedagogic psychology"

The defence of the thesis will be held on March 4<sup>th</sup> of 2014 at 12<sup>00</sup> at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC, awarding degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: 0010, Yerevan, Tigran Mets 17.

### SUMMARY

**Modern character of the work:** It's historically established the regularity that offences and crimes are growing in those countries where there have been wars, natural and alternative disasters and other social convulsions and cataclysms. As a rule the standard of living decreases, the social-economic and moral bases of families are collapsed, the number of abandoned, orphaned children, orphanages, the non-governmental organizations for children care increase, foreign ideas penetrate into the public consciousness in the countries where there have been war situations, natural and social disasters.

The research can be considered urgent also in the case that in the chain of deviant behavior causality it is almost not studied father's role as bearer of low in family in procedure of teenager's upbringing.

**The object** of this research work is the causality of teenager deviant behavior.

**The subject** of this thesis is the peculiarities of father's role in teenagers' sexual self-confidence in the chain of causality of deviant behavior.

**The aim** of this thesis is to study the psychological causative system of teenagers' deviant behavior, particularly the role of father in the procedure of deviant behavior formation.

**According to scientific hypothesis** of the research work the formation of teenagers' deviant behavior is polydeterministic essence.

**The issues focus mainly on:**

1. Analyze the researches of the psychologists, pedagogists about the causality of deviant behavior.
2. Differentiate types of deviant behavior through the research of theoretical bases of the analyze, clarify the content of concept "delinquent" and the borders of such behavior studies.
3. Study father's role in the causality chain of teenagers' deviant behavior.
4. Through the way of existing analyzes of researches and summary of our researches cultivate theoretical bases of our empiric studies about causality of teenager's deviant behavior and our vision.

5. Study empirically the peculiarities of father's image in teenagers' deviant behavior and father's role in their upbringing system.

6. Study empirically ideals of the teenagers with deviant behavior. Cultivate psychological-methodical tasks for parents for behavioral deviation of their children for preventing and overcoming disruption of relations between them.

### **The scientific novelty of the thesis**

➤ It is established that the criminal world perceived as muscular ideal circumstance contributes the formation of boys' (also some girls') deviant behavior.

➤ It is shown that in the family distortions of father's role and father's image in teenager's perceptions are the most important conditions in the formation of teenagers' deviant behavior.

➤ It is presented those complex of individual psychological peculiarities which contributes the formation of delinquency.

➤ It is cultivated psychological-pedagogical complex of works carried out with teenagers.

**In the first chapter** short review of history of framework is presented. Psychological descriptions of teenagers are analyzed, degrees of social maturity, moral-psychological self-consciousness of teenagers' with deviant behavior are studied.

**In the second chapter** of the work it is presented management and methodology of the study. The groups of teenagers are differentiated according to their offences and crime. In the following chapter we reverted to the screening of teenagers' unfavorable personal factors.

**In the third chapter** it is observed the content of prophylaxis of teenagers' deviant behavior and conditions of implementation, methodical tasks for parents and pedagogues, for preventing teenagers' deviation.

The research shows that adolescents and the juvenile's moral degradation, the improper influence of family, may be a result of their irresponsible attitude to their duties, requirements of children.

Of course, of economic relations, new challenges, stay sharp decrease in the level of poverty, disadvantage and social changes of state, and the long-term blockade of them born with a number of other negative phenomena are also important.

These factors determine the unfavorable personal qualities of teenagers, which is under the objective causality of disruptive behavior.

**Dissertation structure:** The dissertation consists of introduction, three chapters, conclusion, bibliography and annexes.

There are five scientific articles on this thesis.